



Գյուղատնտեսության զարգացման ուղիները Հայաստանում





Գյուղատնտեսությունը՝ որպես տնտեսության ճյուղ և կյանքի բնագավառ, ունի օբյեկտիվ անկատարություն. այն ցրված է տարածության և խտացված՝ ժամանակի մեջ: Գյուղատնտեսության մեկ ուրիշ առանձնահատկությանը՝ բարոյականությանը, դեռ 2200 տարի առաջ անդրադարձել է Կատոնը՝ սկսելով իր երկրագործության մասին աշխատությունը տարբեր զբաղմունքի մարդկանց համեմատական վերլուծությունով և գտնելով, որ «ամենամաքուրը, ազնիվը, հավատարիմը նրանցից, բայց և ամենաքիչ եկամուտ ստացողը» գյուղատնտեսությամբ զբաղվողն է:

Անկախ իր զարգացվածությունից գյուղատնտեսությունը ցանկացած երկրում համարվում է բնակչությանը պարենամթերքով ապահովման առաջնային ճյուղերից մեկը և այդ պատճառով այս ոլորտի զարգացումն ու հետևողական անշխատանքների իրականացումը շատ մեծ կարևորություն ունի: Գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության և գյուղատնտեսական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջմունքները: Գյուղատնտեսության մեջ գործում են նույն տնտեսական օրենքները, ինչ՝ տնտեսության մյուս ճյուղերում, իհարկե ունենալով ճյուղին բնորոշ առանձնահատկություններ՝

1. Գյուղատնտեսության մեջ արտադրության գլխավոր միջոցը հողն է: Համեմատելով արտադրության այլ միջոցների հետ այն չի մաշվում, իսկ ճիշտ «օգտագործման» և հետևողական աշխատանքների դեպքում բարելավվում է իր որակական հատկանիշները:
2. Որպես արտադրության միջոցներ գյուղատնտեսության մեջ հանդես են գալիս կենդանի օրգանիզմները՝ բույսերը և կենդանիները:

3. Գյուղատնտեսության մեջ արտադրության հետագա գործընթացին մասնակցում է արտադրվող ապրանքը: Որպես արտադրության միջոցներ օգտագործվում են սերմեր, անասնակեր, ինչպես նաև անասնազվաքանակի մեծ մասը՝ հողի վերականգնման և հողատարածքի մակերեսի մեծացման համար: Այս ամենի համար անհրաժեշտ են լրացուցիչ նյութական ռեսուրսներ, արտադրական նշանակալի շինություններ և օբյեկտներ:
4. Գյուղատնտեսության մեջ աշխատանքային ժամանակաշրջանը համընկնում է ապրանքի արտադրության ժամանակաշրջանի հետ: Այս ոլորտում արտադրության ժամանակաշրջանն ընդգրկում է այն ժամանակամիջոցները, երբ գործընթացն իրականացվում է մարդու ազդեցության ներքո (վար, բերքահավաք և




- այլն) և երբ այն իրականացվում է անմիջապես բնական գործոնների ներքո (աճ, հասունացում և այլն): Այս երկու ժամանակամիջոցների համապատասխանությամբ է պայմանավորված գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը: Վերջինս նշանակալի ազդեցություն է թողնում արտադրության կազմակերպման, տեխնիկայի, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, և վերջին հաշվով նաև՝ ընդհանուր առմամբ տնտեսության արդյունավետության վրա:
5. Գյուղատնտեսության մեջ աշխատանքի բաժանումն իրականացվում է այլ կերպ՝ հողային, աշխատանքային և նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման նպատակներում ձգտում են հասնել բուսաբուծության և անասնապահության ճյուղերի օպտիմալ համադրության և զարգացման:

6. Որպես կանոն գյուղատնտեսության մեջ տեղաշարժվում են արտադրության միջոցները, իսկ աշխատանքի առարկան մնում է մեկ վայրում, այսպիսով գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման բնույթը նշանակալիորեն տարբերվում է այլ ոլորտների հետ համեմատ: Էներգետիկ ռեսուրսների պահանջարկն այստեղ ավելի մեծ է, ընդ որում գյուղատնտեսության աշխարհագրական բաշխումը և արտադրության սեզոնային բնույթն ավելացնում է տեխնիկային և արտադրության միջոցների պահանջարկը:

Գյուղատնտեսությունը Հայաստանում

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է:

Հայաստանը (ներառյալ ԼՂՀ-ն) շուրջ 40 հազար կմ² ընդհանուր մակերես ունեցող լեռնային երկիր է Հարավային Կովկասում: Այդ տարածքի կեսից ավելին պիտանի չէ գյուղատնտեսություն վարելու համար: Տարածքի մեծ մասն ամփոփված է



1000 և 2500 մետր բարձրությունների միջև (կամ այլ կերպ՝ տարածքի մոտ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 1000 մետր բարձրության վրա) և ունի 6 և ավելի աստիճան թեքություն: ՀՀ գյուղատնտեսությունը ծավալվում է 14 հազար կմ²-ից (1392 հազար հեկտար) պակաս հողատարածության վրա, որից 520 հազար

հեկտարը (37.3%) վարելահողեր են, մոտ 40 հազար հեկտարը (2.9%)՝ բազմամյա տնկարկներ, 143 հազար հեկտարը (10.3%) կազմում են խոտհարքները և 689 հազար հեկտարը (49.5%)՝ արոտավայրերը:

Միջին տարեկան տեղումները տատանվում են 250մմ՝ հարավում և 450մմ՝ հյուսիսում արժեքների շուրջ:

Հայկական մրգերի ու բանջարեղենի բարձր համային հատկանիշները պայմանավորված է սուր կլիման ցերեկային առավելագույն և գիշերային նվազագույն ջերմաստիճանների



տարբերությամբ, ինչը հասցնում է զգալի չափերի և այն հողի հարուստ միկրոտարրային կազմի հետ միասին ապահովում է բույսերում երկրորդային սինթետիկ նյութերի բուռն առաջացումը: Վերջիններիս լայն օգտագործումը թե՛ թարմ, թե՛ պահածոյացված վիճակում պայմանավորված է

ինչպես էթնո-պատմական, այնպես էլ սոցիո-կլիմայական առանձնահատկություններով:

Հացահատիկի՝ հիմնականում աշնանացան ցորենի և գարնանացան գարու տարածքները վերջին մեկ և կես տասնամյակում հանրապետությունում մի քանի անգամ աճել են: Կերային մշակաբույսերի երբեմնի հարուստ ցանկն այժմ ներկայացված է միայն առվույտով և կորնգանով:

Լեռնային շրջաններում վեգետացիան տևում է 4, նախալեռնային շրջաններում՝ 5, իսկ հարթավայրային գոտում՝ 6 ամիս: Օգտագործելով թաղանթային ծածկույթներ, մասնակի ջեռուցում, նաև կիրառելով մտածված պտղափոխություն՝ Արարատյան հարթավայրում ևս 1-2 ամսով երկարացվում է վեգետացիոն շրջանը, և

մեկ տարում 3 բերք են ստանում (օրինակ, թաղանթի տակ ստանում են սեղանի կանաչի և սալաթային մշակաբույսեր, ապա բանջարեղեն կամ վաղահաս կարտոֆիլ, եգիպտացորեն և, վերջապես, աշնանացան ցորեն):

Մշակվող կուլտուրաների ցանկն անցնում է 50-ից, բնության մեջ հանդիպողներին՝ 6500-ից: Դրանցից մոտ 300-ը ուտելի բույսեր և դեղաբույսեր են, որոնք հավաքվում են բնակչության կողմից և օգտագործվում՝ կազմելով սպառվող սննդի 10-15%-ը: Հաշվի առնելով այն, որ նշված բույսերի զգալի մասը էնդեմիկ են և նրանց մեջ հանդիպում են նաև անհետացող բույսեր, փորձեր են արվում (ցավոք, պետական հովանավորության հետ չառնչվող) դրանք բազմացնելու ֆերմերական տնտեսություններում, որից և՛ ֆերմերի եկամուտը կաճի, և՛ բնական պաշարները կպահպանվեն:

Թերևս Հայաստանի և նրա գյուղատնտեսության համար ամենաբնորոշ ուղղահայաց գոտիականությունն է: Կլիմայական պայմանների փոփոխությունը տարբեր բարձրություններում մի շարք առավելություններ է ստեղծում, որոնցից ամենակարևորը դիվերսիֆիկացումն է՝ գյուղատնտեսության համար և կենսաբազմազանության

պահպանման հնարավորությունը՝ բնապահպանության և էկոլոգիայի համար: Օրինակ, ծիրանը, որի բերքատվության տևողությունը մի վայրում 10-15 օր է, հանրապետության շուկաներում



գոյություն ունի 100-105 օր: Հասկանալի է, որ արտահանման ժամկետները նույնպես այդչափ ընդլայնված են: Դիվերսիֆիկացման ևս մեկ վառ օրինակ է գյուղատնտեսական տեխնիկայի, հատկապես կոմբայնների սակավության պայմաններում, միևնույն մեքենայի բազմիցս օգտագործման հնարավորությունը. հացահատիկահավաք կոմբայնները հուլիսին նախալեռնային շրջաններից իջնում են հարթավայր, կատարում բերքահավաք, իսկ օգոստոսին հարթավայրայինների հետ բարձրանում են նախալեռնային և լեռնային շրջաններ: Ուղղահայաց



գոտիականությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև մեղվաբուծության համար: Այս ամենին նպաստում է ինչպես երկարատև և տաք ամառը, այնպես էլ՝ ծաղկող պտղատու այգիները, ծաղկաշատ մարգագետինների ու արոտավայրերի, կերային մշակաբույսերի առկայությունը: Բայց ինչպես նշում են մասնագետները՝ նույն կլիմայական

և բնատեսուրսային պայմաններն ավելի նպաստավոր են մեղվաբազմացման, քան մեղրի արտադրության համար:

Գյուղատնտեսության ոլորտի խնդիրները

Չնայած նրան, որ գյուղատնտեսական ոլորտում ռեֆորմներն ընթանում են, այս բնագավառում դեռ կան շատ չլուծված խնդիրներ: Տնտեսությունների մեծամասնությունը բնույթով մնում է բնամթերային, իսկ կանոնավոր կերպով շուկա

դուրս գալու հնարավորություն ունեցող մի քանի հազար տնտեսություններ կարողացել են ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդլայնված արտադրություն հիմնականում այլ ոլորտներում ձևավորված կապիտալի ներդրումով:

► Գյուղատնտեսություն (կոչվում է նաև ֆերմերություն կամ հողագործություն) կենդանիների, բույսերի, սունկերի և սննդի համար օգտագործվող այլ կենսաբանական արտադրանքների բազմացումն ու բուծումն է:



Վերջին հինգ

տարիներին ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է շուրջ 20 տոկոս (WB, 2016): Այն բաղկացած է հիմնականում մեծաքանակ, մասնատված փոքր գյուղացիական տնտեսություններից: ՀՀ-ում առկա են շուրջ 317000 գյուղացիական տնտեսություններ, և դրանցում մեծամասամբ առկա է աշխատանքի խիստ ցածր արտադրողականություն և նոր տեխնոլոգիաների կիրառման բացակայություն: Հողակտորները փոքր են, միջինում 1,4 հեկտար (ԱՎԾ. 2014): Կրթական և


գիտասփյուռ-խորհրդատվական համակարգը դերակատարում չունի գիտելիքի և տեխնոլոգիայի փոխանցման առումով, քանի որ այս ինստիտուտները չունեն բավարար կարողություններ: ՀՀ գյուղացիական տնտեսություններում հիմնականում կիրառվում են մշակման ավանդական մեթոդներ: Խոցելի մշակաբույսերից ավելի կայուն մշակաբույսերի անցումը դանդաղ է իրականացվում, ինչն իր հերթին դանդաղեցնում է ավտոմատացումը մի շարք ճյուղերում: Տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակը լրջագույն երկարաժամկետ ռիսկ է հանդիսանում:

Գյուղատնտեսության ոլորտի պետական ֆինանսավորումը բավական քիչ է: 2016թ. այն կազմել է 86 մլրդ դրամ (Պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. 2017): Պետական աջակցության մեխանիզմները նպատակաուղղվում են ոչ թե տեխնոլոգիաների փոխանցման վրա, այլ ներդրանքների, (ջուր, դիզելային վառելիք, պարարտանյութ, ցորենի սերմնացու, վարկերի տոկոսադրույք) հետ կապված ծախսերի սուբսիդավորման, ինչպես նաև պարբերական գործառույթությունների իրականացման վրա, մասնավորապես պատվաստումներ, հողի քիմիական անալիզ և համանման այլ ծառայությունների տրամադրում: Նշված սուբսիդավորումները տրվում են հիմնականում փոքր տնտեսություններին. օրինակ՝ վարկային տոկոսադրույքների

սուբսիդավորման ծրագիրը թիրախավորում է փոքր արտադրողներին:

Առհասարակ գյուղմթերքի արտադրման համակարգի բարելավումը պահանջում է հուսալի գործող վերամշակում, վարկեր և ապահովագրություն, շուկաների նկատմամբ ճիշտ կողմնորոշում, տեխնիկական և

խորհրդատվական օգնություն: Վերջինս չնայած գործում է հանրապետությունում, բայց այդպես էլ չի գտել կենսական դառնալու մեխանիզմներ և կարողանում է գոյությունը պահպանել միայն միջազգային կազմակերպությունների աջակցության



շնորհիվ: Այս է պատճառը, որ բնագավառի իրական կամ թվացյալ հաջողությունները թվարկելիս, ներկայացվում են բերքատվության թվեր, որոնք լավագույն դեպքում կազմում են տվյալ ագրոէկոլոգիական համակարգով պայմանավորված բերքի 40-50%-ը:

Բացի վերը նշված ընդհանուր խնդիրներից, անդրադառնանք Հայաստանում այս ոլորտին առնչվող մի քանի խնդիրների, որոնք են՝ հող, ոռոգում, կրթություն, խորհրդատվություն, գիտություն, վերապատրաստում, վերամշակում և այլ խոչընդոտներ:

Հող: Ինչպես ցանկած երկրում, այնպես էլ Հայաստանում գոյություն ունի գյուղացիական տնտեսության օպտիմալ չափ և դրա հետ կապված հողհանդակների օպտիմալ շահագործում: Հողի շուտափույթ սեփականաշնորհումը Հայաստանում հանգեցրեց նրան, որ գյուղատնտեսության նախկին ենթակառուցվածքները քանդվեցին, իսկ նորերը, որ պետք է օգնեին գյուղացուն, կողմնորոշվել իրեն անձանոթ հասարակական տիրույթում՝ չձևավորվեցին: Շատ փոքր կտորների բաժանված հանդակներն առավել նվազեցին կոմունիկացիաների անցկացման և անարդյունավետ ոռոգման, իսկ հետագայում նաև՝ սխալ հերկի հետևանքով:



Նախկին 869 կոլեկտիվ և պետական տնտեսություններ ծավալված էին 147.000 առանձին հողհանդակների վրա: Պետք էր դրանք պահպանել՝ մրցութային կարգով տրամադրելով առանձին լոթերով՝ տարբերություն դնելով գյուղի աշխատավորի և գյուղաբնակի միջև, այլ ոչ թե բաժանել մոտ միլիոն կտորների: Նման սխալ մոտեցումը հաճախ հիմնավորվում է «դժգոհությունների առաջացում» խուսափելու համար, սակայն տվյալ դեպքում դա միանգամայն անհիմն է, քանի որ մեր առաջադրած տարբերակում, եթե դժգոհություն առաջանար էլ, դժվար թե

գերազանցեր այսօրվա օրեցօր աճող անբավարարվածության զգացումը: Փոխարենը խնդիրն ստացած կլիներ իր ճիշտ լուծումը:

Հանրապետությունում գյուղացիական տնտեսության միջին չափը հավասար է 1.37 հա և տատանվում է 0.61 հա Արարատյան հարթավայրում և 3.0 հա նախալեռնային ու լեռնային շրջանների համար: Միջին հաշվով 3 կտոր կազմող տնտեսության հողատարածքի մեկ կտորը ռոռզելի է, երկուսը՝ ոչ: Տնտեսությունների 88%-ը ավելի փոքր է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 77%-ը: Տնտեսությունների 12%-ը ավելի մեծ է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 23%-ը: Տնտեսությունների մոտ 15%-ում մշակում են նաև վարձակալած հողեր, միջինը 3.2 հեկտարի չափով, իսկ 30%-ում չեն մշակում մասամբ կամ ամբողջապես՝ հողերի վատ որակի, ջրի կամ միջոցների բացակայության, տնից հեռու գտնվելու պատճառով:

Վարելահողերի գրեթե 37.0%, կամ ավելի քան 165.0 հազ. հեկտարը նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: Օգտագործման մակարդակը հատկապես ցածր է ՀՀ Վայոց Ձորի և ՀՀ Կոտայքի մարզերում: Նշենք, որ նպատակային չօգտագործվող վարելահողերի շուրջ 100.0 հազ. հեկտարը թողնվում է որպես խոտհարք՝ խոտհնձի համար:

Հայաստանի մակերեսի մոտ կեսը լավային առաջացումներ են՝ առանց կամ գրեթե առանց հողածածկի: Մյուս կեսը լեռնային մարգագետնային, շագանակագույն, անտառային դարչնագույն, կարբոնատային, կիսաանապատային և լեռնային սևահողեր են: Բոլոր հողերն այս կան այն չափով վնասված են ոչ ճիշտ ագրոտեխնիկայի կիրառման և հողապաշտպան միջոցառումների բացակայության, ինչպես նաև հումուսային շերտի աղքատացման, քամու և ռոռզման էրոզիայի, աղակալման հետևանքով: Հատկապես թեքությունների վրա գտնվող հողակտորների՝ մեծ տոկոս կազմելու պարագայում միանգամայն անթույլատրելի է լանջին ուղղահայաց ակոսներով վար կատարելը, ինչը տեղի է ունենում գրեթե ամենուրեք, և դրա նախապայմանն է սխալ կատարված հողհատկացումը:

Ինչ վերաբերվում է անտառածածկույթներին, այն հանրապետությունում տարիներ առաջ կազմում էր 11%: Նշված տարիների ընթացքում, սկզբում՝

Էներգետիկ ճգնաժամի, իսկ ապա ուղղակի հանցավոր շահագործման հետևանքով շատ ծառեր կտրվեցին, որը կազմում է 6%: Նույն էներգետիկ ճգնաժամի պատճառով վերջին տարիներին հողերը չնչին քանակներով են հարստացվել կոմպոստով կամ գոմաղբով, որն էներգետիկ ռեսուրսներով աղքատ Հայաստանում ավանդաբար օգտագործվել է չորացած վիճակում՝ որպես վառելանյութ գյուղական վայրերում:

Ինչ վերաբերում է արդյունաբերական եղանակով ստացվող պարարտանյութերին, Հայաստանը նախկինում արտադրում էր բավական չափով ազոտ պարունակող պարարտանյութ (կարբամիդ), նաև ներկրում էր ազոտ, կալիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր երկաթօգծով: Այժմ կարբամիդ Հայաստանում չի արտադրվում, փոխարենը Վրաստանից ներկրվում է ոչ բարձրորակ ազոտական սելիտրա: Տարածաշրջանի բարդ քաղաքական իրավիճակի պատճառով երկաթօգիծը գրեթե չի գործում: Դրա հետևանքով չեն ներկրվում K և P: Եվ եթե երկրի հողերն ու ջուրն որոշ աշխարհագրական տարածքներում հարուստ են կալիումով, ապա ֆոսֆորական պարարտանյութերի վերջին տարիների բացակայությունը բերել է այնպիսի դեֆիցիտի, որով վտանգվում է գյուղատնտեսական կենդանիների ոսկրակազմի նորմալ ձևավորումը:

Ոռոգում: Հանրապետությունում ոռոգվում է ոչ ավելի, քան 200 հազար հա տարածություն, այն էլ շատ ցածր արդյունավետությամբ: Խորհրդային Միությունում գործող էներգետիկ համակարգը՝ էլեկտրաէներգիայի չափազանց ցածր գներով, ոռոգման հայեցակարգն այն էր, որ միշտ կարելի էր ոռոգմանը մասնակցած կամ չմասնակցած, բայց արդեն ներքին կետում հայտնված ջուրը նորից մղել վերև և կատարել ոռոգում:

Այսօր չնայած նրան, որ վերջին 10-15 տարում անընդհատ փոփոխվել են սակագները և փորձարկվել ոռոգման կառավարման տարբերակներ (օրինակ, ոռոգման համակարգի տարբեր



հատվածների համար սուբյեկտների պատասխանատվության բաշխումը), համակարգը չի օպտիմալացվել, քանի որ փոփոխությունները կրել են, կարելի է ասել, համարձակ բնույթ և ոչ թե եղել վերլուծությունների, լայն քննարկումների և մասնակցային սկզբունքով որոշումների ընդունման արդյունք:

Այս ամենին պետք է ավելացնենք ոռոգման համակարգի տեխնիկական անմխիթար վիճակը և նոր տեխնոլոգիաների իսպառ անտեսումը, որի պատճառով ջրի կեսից ավելին կորչում է մինչև դաշտ հասնելը, որտեղ էլ այն օգտագործվում է նույնպես 50%-ից պակաս արդյունավետությամբ:

Կրթություն, խորհրդատվություն, գիտություն: Անդրադառնալով կրթությանը գյուղատնտեսական ոլորտում պետք է նշել, որ Հայաստանում այն թույլ և անարդյունավետ է ու կապ չունի հետազոտությունների և գիտության հետ և չի համապատասխանում ոլորտի կարիքներին: Ավելին, բուն գյուղատնտեսության ոլորտում իրավիճակն ավելի անմխիթար է: Գյուղատնտեսական կրթական համակարգում սովորող ուսանողները հիմնականում քաղաքաբնակ են և նրանց չնչին տոկոսն է միայն ավարտելուց հետո աշխատում ըստ մասնագիտության:

Գիտական համակարգն անկման մեջ է: Պետական չնչին և ոչ այդքան շատ դրամաշնորհային ֆինանսավորումն ի վիճակի չէ արդյունավետորեն ծառայեցնել գյուղատնտեսական գիտությունը գյուղատնտեսական արտադրությանը: Թույլ է



կրթության, գիտության և արտադրության փոխադարձ կապը, հատկապես գյուղակադեմիայի՝ վերջերս գյուղնախարարության ենթակայությունից դուրս գալուց հետո (փոխանակ ինտեգրվեք գյուղատնտեսական գիտության հետ): Գյուղատնտեսության ինտելեկտուալ դաշտը խիստ տրոհված է:

Ինչ վերաբերվում է խորհրդատվությանը, իր գոյության ավելի քան 10 տարիների ընթացքում ունեցել է իր դրական դերակատարությունը: Սակայն մինչև

հիմա գոյությունը պահպանել է USDA և WB միջոցներով: Հետագա գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումը պետք է ստանալ ֆերմերների վճարումներից, ինչը ֆերմերի անվճարունակ լինելու պատճառով մոտ ապագայում ռեալ չէ, կամ պետական ֆինանսավորումից, որն ավելի քիչ հավանական է:

Վերամշակում: Հայկական վերամշակող ձեռնարկությունները տարիներ շարունակ ինչպես ներսի, այնպես էլ դրսի շուկաների համար արտադրել են բարձրորակ հյութեր, ջեմեր և մուրաբաներ, տոմատի մածուկ, թթուներ և մարինադներ: Համաշխարհային համբավ ունեն հայկական միրգն ու բանջարը և նրանցից ստացված պահածոները: Միայն 1997-ից վերամշակող ձեռնարկությունները սկսեցին գործել, սկզբում՝ իրենց կարողությունների 5-10%-ով, ապա՝ թափ հավաքելով և ընդլայնելով արտադրական ծավալները: Ինչպես գյուղատնտեսության այլ ոլորտներում այստեղ էլ անհրաժեշտ են բարեփոխումներ, որը հիմնականում կապված է ժամանակակից սարքավորումներով ապահովելու և միջազգային ստանդարտներին համապատասխան լինելու հետ: Այս պատճառով կարելի է ասել, որ այստեղ կան անկատարություններ:

Բացի ֆերմերվերամշակող հարաբերությունների անկատարությունից, նոր



շուկաների որոնումներից, արտոնագրման համակարգի անկատարությունից, որն ի վերջո խոչընդոտում է պատրաստի ապրանքի արտահանումը, կան նաև զուտ տեխնիկական խոչընդոտներ, որոնց վերացումից հավանաբար և պետք է սկսել բնագավառի առողջացումը.

ա) վերամշակող ձեռնարկությունների ընդունման կետերի մթերքի որակավորման անալիզների ոչ ադեկվատ լինելը.

ի հարկե, ի վնաս ֆերմերի

բ) ընդունված ապրանքի դիմաց վճարման պարտավորությունների ուշացած կատարումը:

Տեխնիկական և այլ խոչնդոտներ: Դաշտային գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը կազմում է հազիվ 10%, իսկ տեխնիկայի միջին «հասակը»՝ 20-25 տարեկան: Ընդ որում, եթե այդ «հասակի» տրակտորը լավ խնամքի դեպքում դեռ բավարար է ծառայում տիրոջը, նույնը չի կարելի ասել կոմբայնների մասին: Պահեստամասերի բացակայության հետևանքով բերքի կորուստը հասնում է 30%-ի: Ավելի վատ վիճակում է անասնապահական համալիրի հագեցվածությունը տեխնիկայով (գոմերի մաքրում, կթում, կաթի պահեստավորում, մշակում, տեղափոխում): Վերջին տարիներին փոքր-ինչ բարելավվել է գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխնիկական հագեցվածությունը:

Գյուղատնտեսական արտադրությունը հանրապետությունում բնութագրվում է բարձր ռիսկայնությամբ, ինչը պայմանավորված է բնակլիմայական և երկրաբանական անբարենպաստ պայմանների առաջացման մեծ հավանականությամբ: Ըստ գնահատման, հողատեսքերի շուրջ 50% ենթակա է հողատարման, 20%՝ գերխոնավացման, 30%՝ սելավների և ջրհեղեղների, 17%՝ կարկտահարման, 3%՝ սողանքների: Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում նաև վաղ գարնանային

ցրտահարությունները,

երաշտները,

խորշակները:

Ընդհանուր առմամբ,

միայն


բուսաբուծության

ճյուղին

հիդրոոդերևութաբանա

կան վտանգավոր

երևույթների (ՀՎԵ) արդյունքում հասցվող ամենամյա վնասը, ըստ գնահատման,



կազմում է շուրջ 35-40 մլրդ դրամ: Այդ առումով առանձնահատուկ կարևորվում է կանխարգելիչ միջոցառումների իրականացումը և ռիսկերի արդյունավետ կառավարումը:

Կարևոր խնդիրներից մեկը այն է, որ այժմ հանրապետության բնակչության մոտ կեսը զբաղված է գյուղատնտեսությամբ: Սակայն դա անբնական է, քանի որ դժվար թե նրանք բոլորը հենց ֆերմեր են: Բայց ծայր առած հողի վաճառքը զարգացում չի ապրում նաև այն պատճառով, որ անգամ ինքն իրեն ֆերմեր չճանաչող գյուղացին մնում է հողին կառչած՝ այլ աշխատատեղ չունենալու պատճառով, որպես գոյության պահպանման միակ միջոցի: Մի խոսքով՝ զարգացումն արգելափակված է:

Պետական մարմինների կողմից գյուղատնտեսության նկատմամբ ամբողջական ծրագրային մոտեցում չի ցուցաբերվում: Իհարկե կան ռազմավարական ծրագրեր, իրականացվում են աշխատանքներ, սակայն կարծես թե այս ամենը բավարար չէ, եթե հաշվի առնենք գյուղատնտեսության զարգացման ներկա իրավիճակը: Շատ դեպքերում կտրված է կապը պետություն-մասնավոր հատված-քաղքացի:

Միջազգային համագործակցություն: Անդրադառնալով միջազգային ծրագրերին պետք է նշել, որ ընթացող գլոբալիզացիայի անշրջելի գործընթացներին զուգընթաց տարեցտարի ընդլայնվում է միջպետական համագործակցությունն ագրոպարենային համակարգում՝ համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվում է համագործակցությունը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ-FAO), Համաշխարհային Բանկի (WB), Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD), Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության (OIE), ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի և մի շարք այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցությունն ընթանում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Առավել սերտ համագործակցություն է իրականացվում ԱՊՀ, Եվրամիության, ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի պետությունների հետ:



Ագրարային

հատվածում իրականացվող
ծրագրերին զգալի
աջակցություն է
ցուցաբերվում դոնոր-
հանրության կողմից
(Օբսֆամ, WFP, GIZ, USDA,
Card, ICARDA, USAID և այլն):
2011թ. դեկտեմբերի 16-ին

տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանդիպումը դոնոր-հանրության ներկայացուցիչների հետ: Այստեղ էլ հարկ է նշել, որ միջազգային, դրամաշնորհային ծրագրերի իրականացման գործընթացում գյուղնախարարության կողմից հաճախ անտեսվում է գյուղացու և գյուղատնտեսության հետ առնչվող կազմակերպությունների կարծիքը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի գյուղատնտեսությունում ծառայած հիմնախնդիրներն արտահայտում են անցումային շրջանի առանձնահատկություններ և շուկայական տնտեսության անցնելու դժվարություններ:

Գյուղատնտեսության նշված առանձնահատկությունները պահանջում են համապատասխան վերլուծություններ ոլորտի նյութատեխնիկական բազայի ձևավորման, արտադրության կազմակերպման ու կառավարման, արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման համար՝ սահմանելով տնտեսության այս ճյուղի զարգացման ուղղությունները:



Հողի որակի և կառավարման բարելավում: Իրավիճակը բարելավելու լավագույն տարբերակը կլինեն թերևս այն, որ պարարտանյութերի ներկրման դժվարություններն օգտագործվեն ի նպաստ օրգանական կամ կենսաօրգանական ուղղվածությամբ գյուղատնտեսության զարգացման, երբ անօրգանական բնույթի սննդատարրերը փոխարինվում են տարբեր եղանակներով վերամշակված

գոմաղբում և այլ թափոններում (կենսահումուս, մեթանային խմորման կոնվերտ, կոմպոստ) առկա բաղադրիչներով: Այս դեպքում հողը ոչ միայն հարստանում է անհրաժեշտ սննդատարրերով, այլ նաև հումուսի առաջացման համար անհրաժեշտ բակտերիալ կազմով: Այդպիսի հողերում աճող բույսերը գրեթե կարիք չունեն քիմիկատների միջամտության, իսկ աճեցրած բերքը որակվում է որպես էկոլոգիապես մաքուր և հեշտությամբ գտնում է իր տեղը շուկայում: Վերջին 10 տարիների ընթացքում մասնակի հաջողությամբ փորձեր են արվել հանրապետությունում տարածել կենսահումուսի կուլտուրան: Առաջին քայլերն են արվում գյուղատնտեսության թափոններն (գոմաղբ, բուսական մնացորդներ) օգտագործել կենսագազ և բարձրարժեք կենսաօրգանական պարարտանյութ ստանալու ուղղությամբ: Կենդանիների գլխաքանակը երկրում այնպիսին է, որ ոչ միայն կապահովի բոլոր գյուղատնտեսական հողերը արժեքավոր կենսապարարտանյութով, այլև թույլ կտա արտահանել դրանից ստացված խտացված պատրաստուկներ:

Հայաստանն ունի ևս մի բնական ռեսուրս, որը հողի որակը բարելավող հիանալի կոմպոնենտ է: Խոսքը երկրի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում հայտնաբերված ցեոլիտների մեծ պաշարների մասին է: Դրանք բարելավում են հողի զագափոխանակությունը և ապահովում սննդանյութերի մուտքը բույսի մեջ փոքրիկ չափա-

բաժիններով, ինչը չի հանգեցնում սննդատարրերի կուտակմանը բույսում և դրա- նով նպաստում է բույսի աճի և արտադրողականության բարձրացմանը:

Անդրադառնալով հողի շուկայի ակտիվացմանը, անշուշտ, պետք է դիտարկվի որպես բազմապլանային միջոցառում: Անհրաժեշտ է ստեղծել հուսալի գործող հիպոթեկային համակարգ, և վերը նշված սոցիալական լարվածությունից խուսափելու համար մշակել հատուկ պետական ծրագիր:

Ինչպես արդեն նշել էինք ամեն գյուղացի չէ, որ իրեն կարող է ֆերմեր համարել: Սակայն ապրելով գյուղում և գործ ունենալով հողի հետ, նրանց նույնպես անհրաժեշտ է համապատասխան գիտելիքներ հողի պահպանման, լավ և էկոլոգիապես առողջ սնունդ ստանալու համար: Նման դեպքում ապահովելով ոչ միայն իր ընտանիքին թարմ մրգերով և բանջարեղենով, այլև դուրս գալ շուկա՝ արտադրանքի ավելցուկով: Իսկ զինված լինելով ժամանակակից տեխնոլոգիաներով՝ գյուղացին տնամերձից կարող է ռեկորդային բերք ստանալ՝ մեղմելով անցումային շրջանին հատուկ և անխուսափելի ցնցումները:

Հողերի անարդյունավետ կառավարման այլ օրինակ մեզ մատուցում է Արարատյան հարթավայրը, ուր ցորենն իր զբաղեցրած տարածքներով առաջին մշակաբույսն է դարձել: Ցորենի տարածքները հարթավայրում սկսեցին ընդարձակվել շատ տարիներ առաջ, երբ իրացման և ուղղակի գոյատևելու խնդիր կար: Այդ միտումը չի դադարել և այժմ, բայց արդեն նվազագույն ֆինանսական և աշխատուժի ներդրման առաջնայնության պատճառաբանությամբ: Սակայն նվազագույն ներդրումները բերում են և նվազագույն արդյունք: Հարթավայրային և նախալեռնային շրջաններում մեկ հեկտարի վրա ցորեն մշակելը պահանջում է 30-35 մարդ-օր (հիմնականում տղամարդու մասնակցությամբ) և բերում է 100-150 հազար դրամ եկամուտ: Բանջարեղենի մշակումը պահանջում է 350-400 մարդ օր (հիմնականում կանանց մասնակցությամբ) և ապահովում մեկ կարգով ավելի եկամուտ՝ ֆինանսական ներդրումների համեմատելի լինելու պարագայում: Հաշվի առնելով հան- րապետությունում տեղի ունեցած դեմոգրաֆիկ փոփոխությունները և ընտանիքի այժմյան կազմը՝ կանանց, ծերերի և անչափահասների գերակշռումով, անհրաժեշտ է դառնում մշակաբույսի ընտրության և ընտանիքի կազմի

համապատասխանեցումը, ինչի վերաբերյալ կարող են բացատրական գործունեություն ծավալել գյուղացիության հետ աշխատող կազմակերպությունները:

Ոռոգման բարելավում: Անհապաղ պետք է բարելավվի ջրատարների վիճակը, հստակեցվի ջրի փոխադրման յուրաքանչյուր հատվածի պատասխանատուն: Գյուղացին պետք է ստանա ջուր և վճարի իր փաստացի ստացած ջրի համար:

Պետք է բարելավվի նաև ջրման տեխնիկան՝ առայժմ ավանդական ոռոգման տեխնիկայի

արդիականացմամբ:

Այս հարցի հետ կապված

Հայաստանում

մեկնարկվել է ոռոգման քառամյա ծրագիրը, որի շրջանակներում

նախատեսվում է մեխանիկական

ոռոգումը փոխարինել



ինքնահոս ոռոգման համակարգով: Մեխանիկական ոռոգման ջրի համակարգը ինքնահոս համակարգով փոխարինելուց հետո շուրջ 2000 հա հողատարածք կներառվի ինքնահոս ոռոգման համակարգում: Այսօր Հայաստանում քայլեր են իրականացվում անցում կատարել կաթիլային ոռոգման համակարգին: Այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն գյուղացիները դեռ ֆինանսապես պատրաստ չեն մտնելու այդ համակարգի մեջ՝ 1 հա հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելն արժե 3000-5000 ԱՄՆ դոլար՝ կախված սարքավորումների որակից: Այս եղանակին անցնելով հնարավոր է տնտեսել ռեսուրսները, քանի որ այս դեպքում բերքը ավելի բարձր է ստացվում: Կառավարությունը պետք է գիտակցի, որ որքան շուտ միջոցներ գտնի դրա համար, այնքան շուտ կձեռքբազատվի ծախսատար դրենաժային համակարգի սպասարկումից: Լինելով, իհարկե, ոչ պակաս ծախսատար՝ կաթիլային համակարգը ապահովում է բարձր բերք և տնտեսում տարածաշրջանում մեծ դեֆիցիտ համարվող ջուրը:

Փորձագետների կարծիքով, Հայաստանը կարող է զգալի քանակություններով խմելու ջուր արտահանել, եթե վերանայի իր ջրօգտագործման հայեցակարգը: Վերջերս այդ ուղղությամբ որոշ քայլեր արվում են, մեծացվում և ամրացվում են բարձր լեռնային և նախալեռնային գոտու ջրամբարները: Դրանց գումարային տարողության համապատասխան մեծացումով միայն կարելի է այսօրվա օգտագործվող 2,5 մլրդ մ 3-ից մոտենալ երկրի ջրային ռեսուրսների պոտենցիալ արժեքին, որն է 7,5 մլրդ մ³, և ռոզեյլ ավելի քան 200 հազար հա:

Ամենակարևորն է՝ ռոզգման համակարգի բարելավումը չի կարող տեղի ունենալ առանց լայն քննարկումների, որոնց ակտիվորեն պետք է մասնակցեն ֆերմերները, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, տեղական կառավարման մարմինները:

Գիտակրթական համակարգ: Գյուղատնտեսական գիտության, կրթության, խորհրդատվության և վերապատրաստման արդյունավետ փոխհամագործակցության



հաջողված մոդել է ամերիկյան «լենդ գրանտ» համալսարանային մոդելը: Այստեղ ոչ միայն գիտությունը և կրթությունն են ներդաշնակորեն ինտեգրված, այլև սերտորեն աշխատում են ֆերմերների հետ: Հատկապես ուշագրավ է, որ հիմնականում համալսարաններին կից գործում են սերմերի սերտիֆիկացման, կամ ջրի, հողի և գյուղատնտեսական մթերքի անալիզների լաբորատորիաները: Վերջիններս ոչ միայն սպասարկում են ֆերմերին, այլև բացահայտում

իրավիճակը, հուշում ոչ միայն կիրառական, այլև ֆունդամենտալ գիտության ուղղությունները: Այսինքն՝ սպասարկելով ֆերմերին, նրանք պարզապես ծառայում

են գիտակրթական համակարգին: Այդ պատճառով էլ ֆերմերը նշված սպասարկման համար միայն մի մասն է վճարում:

Նման համակարգի կիրառումը կստեղծեր այնպիսի միասնական ինտելեկտուալ դաշտ, որտեղ բոլոր գործընթացներին ակտիվորեն կմասնակցեր նաև ուսանողը՝ վաղվա դասախոսը, ֆերմերը, գիտնականը: Վաղուց արդեն անհրաժեշտություն է դարձել կրթական համակարգում ուսանողների կողմից ընտրվող առարկաների ցանկի ընդլայնումը, որը հնարավորություն կտա պահանջարկ չունեցող անդամ, ունիվերսալ մասնագետների փոխարեն պատրաստել նպատակային եզակի մասնագետներ՝ գյուղատնտեսության և նրա հետ առնչվող ցանկացած բնագավառի համար:

Վերամշակում: Վերամշակող համակարգը, վերը նշված թերություններով հանդերձ, հետզհետե զարգացում է ապրում: Ներդրողների համար այն գնալով ավելի հրապուրիչ է դառնում.



հավանաբար, հաշվի են առնվում Հայաստանում աճող մրգի և բանջարեղենի բարձր որակը, անասնաբուժական արտադրանքի

բարձր համային և էկոլոգիական հատկանիշները: Այն հանգամանքը, որ այս բնագավառում կատարված ներդրումների արդյունքում նորանոր ապրանքներ են դուրս եկել արտաքին շուկա, նոր ներդրողների է քաջալերում: Դա իր հերթին կհանգեցնի նոր վերամշակող ձեռնարկությունների գործարկմանը և ոչ լրիվ հզորությամբ աշխատողների լիարժեք բեռնվածությանը: Այս պարագաներում ոչ միայն կլուծվեն ֆերմերների համար այդքան կարևոր բերքի իրացման խնդիրը, այլ նաև պատշաճ գներով ընդունման և ժամանակին վճարումներ կատարելու խնդիրները, քանի որ բավարար թվով մասնակիցների պարագայում բնագավառը կգործի առողջ մրցակցության պայմաններում: Արդեն այսօր կան ձեռնարկություններ, որոնք գարնանը ֆերմերին կանխավճար են տալիս՝ աշնանը նրանից ստացվելիք մթերքի դիմաց:

Հանրապետությունում արդեն գոյություն ունեն ֆերմերական կրեդիտակումբներ, որոնք, գաղափարի տարածման դեպքում, ավելի կաշխուժացնեն այն մթնոլորտը, որում գործում են վերամշակող ձեռնարկությունները: Այսպիսով, հայկական գյուղատնտեսական մթերքը կարող է հաջողությամբ շարունակել իր մուտքը արտաքին շուկա, հատկապես ժամանակակից վերամշակման և փաթեթավորման սարքավորումների առկայությամբ:

Տեխնիկական և այլ խոչնդոտների կանխում: Վեր նշվեց Հայաստանում գյուղատնտեսական տեխնիկայի ոչ հուսադրող վիճակի մասին և այս դեպքում պետք է կրկին հաշվի առնելով միջազգային փորձը, փորձել բարելավել իրավիճակը:



Զարգացած երկրներում ավտոմատացման, մեքենայացման և հետերքավաքի տեխնոլոգիաների շնորհիվ գյուղատնտեսությունը նշանակալի փոխակերպումների է ենթարկվել: Արդի անասնաբուժական տնտեսություններն ամբողջովին

կառավարվում են մեքենաներով, մասնավորապես ավտոմատացված են կերակրման, կրթի, փաթեթավորման, պիտակավորման և որակի վերահսկողության հետ կապված գործառնությունները: Թռչնաբուժարանները կիրառում են ստանդարտացված չափերի արտադրության, սպանդի, սառեցման և փաթեթավորման ավտոմատացված տեխնոլոգիաներ: Մրգատու այգիները և ջերմոցային տնտեսությունները նախկինում ինտենսիվ ձեռքի աշխատանք էին պահանջում, մինչդեռ ներկայումս մեքենաներ են օգտագործում պտուղ բանջարեղենը տնկելու, ջրելու, պարարտացնելու, բերքահավաքի, տեսակավորման համար: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ոչ միայն կրճատել մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունը, այլ նաև արդյունավետ և ռեսուրսախնայող են դարձնում գյուղատնտեսությունը (Ford, 2015): Հաշվի առնելով այս ամենը չկա այլ տարբերակ, քան գիտության և նորագույն



տեխնոլոգիաների մեջ ներդրումների միջոցով գյուղատնտեսության զարգացմանը նպաստելը: Քանի որ սեփական միջոցները այդքան էլ չեն բավարարում ոլորտի բարելավմանը ապա պետք է մշակել ծրագիր պոտենցիալ ներդրողների համար համապատասխան պայմաններ ստեղծելու մասին: Գյուղատնտեսության ոլորտում

պոտենցիալ ներդրողներ կարելի է համարել Սփյուռքի տարբեր համայնքները ներկայացնող էթնիկ հայերին կամ այն պետությունները, որոնց բնակչությունն աճում է, իսկ գյուղատնտեսական ռեսուրսները սահմանափակ են: Այդ երկրները և գործարարները կարող են շահագրգռված լինել մատակարարումների հարցում եղած խզումը լրացնելու մեջ: Հայաստանը գտնվում է գյուղատնտեսության զարգացման համար սահմանափակ պոտենցիալ և ռեսուրսներ ունեցող, բայց նավթով ու գազով հարուստ արաբական մի շարք երկրներից ոչ հեռու: Այդ պետությունները կարող են հանդիսանալ գյուղատնտեսության և պարենամթերքի արտադրության ոլորտներում ներդրումների լավ աղբյուրներ: Օրինակներից մեկը գառների բուծումն է, ոլորտ, որի հանդեպ մեծ է Իրանի և Պարսից Ծոցի այլ երկրների հետաքրքրությունը: Եթե



կառավարությունը մշակի արտավայրերի կառավարման պատշաճ ծրագիր և արտավայրերի վարձակալման պատշաճ սխեմա, ապա դա կարող է գրավել ներդրողներին:

Քանի որ գյուղատնտեսության ոլորտը ամենառիսկայինն է, ճիշտ կլինի մտածել պետական մակարդակում այդ ռիսկերը նվազագույնի հասցնելու ուղիների

մասին: Ինչպես արդեն նշել ենք Հայաստանում հիմնական ռիսկերը կապված են ցրտահարության, կարկտահարության, երաշտի, ուժեղ քամիների և ջրհեղեղի հետ: Յուրաքանչյուր ռիսկ ունի իր յուրօրինակ լուծումը, ընդ որում որոշ դեպքերում լուծումը ենթադրում է մեծ ներդրումներ: Բացի այդ, կա նաև գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման հնարավորություն: Ընդհանրապես, լավագույն գործելակերպը կլինի այն բանի ապահովումը, որ ապահովագրության համար հաշվի առնվեն բոլոր այն ռիսկերը, որոնց ի հայտ գալու հավանականությունը 5 տարին մեկ է կամ ավելի ուշ: Եթե ռիսկերի ի հայտ գալու հավանականության ժամկետը 5 տարուց պակաս է, ապա ավելի լավ է ձեռնարկել պաշտպանության ֆիզիկական միջոցներ, ինչպես օրինակ՝ հակակարկտային ցանցերի տեղադրումը կամ երաշտի ռիսկի պարագայում ջրային ռեսուրսների կուտակման և կառավարման ավելի լավ գործելակերպի որդեգրումը: Կառավարությունը ներկայումս աշխատում է Գերմանական զարգացման բանկի հետ սկսի փորձնական ծրագիր: Բացի այդ, պետք է աջակցության միջոցառումներ նախատեսել նրանց համար, ովքեր պատրաստակամ են ընդունել որևէ գործիք, որը կնվազեցնի ռիսկերը, ինչպես օրինակ՝ հակակարկտային ցանցերի տեղադրում, ազատում հարկերից ու մաքսատուրքերից:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպես պետք է նշել, որ գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացումը հնարավոր է իրականացնել նյութական և ֆինանսական լրացուցիչ միջոցների նպատակային ներդրմամբ՝ ընդլայնելով երկրի (շրջանի) գյուղատնտեսության արտադրական պոտենցիալը: Գյուղատնտեսության մեջ



ներդրումները իրենցից ներկայացնում են տնտեսական գործունեության (գյուղատնտեսության վարման) իրականացման գործընթացում հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման երկարաժամկետ ներդրումներ: Հետևաբար, ներդրումները ոչ միայն հիմնական միջոցների ընդլայնում է, այլ նաև գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների ձևավորման և համալրման ծախսեր են: Երկարաժամկետ ներդրումները գյուղատնտեսության մեջ արդարացված են, եթե դրանք նպաստում են եկամտի սոցիալական էֆեկտի ստացմանը: Գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական պայմաններն են՝

- բարձրացնել գյուղատնտեսական արտադրության կայունության մակարդակը
- ինտենսիվացնել գյուղատնտեսական արտադրությունը և մեքենայացնել արտադրական գործընթացը
- ընդլայնել հողաբարելավման մասշտաբները,
- կատարելագործել արտադրության կազմակերպման և կառավարման ձևերը
- խոշորացնել արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման աստիճանը բարելավել գյուղատնտեսական առանձին մթերքների արտադրության տեղաբաշխվածությունը
- միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հետագա բարձրացման, գյուղատնտեսական հիմնական արտադրամիջոցի՝ հողի, գյուղատնտեսական տեխնիկայի և աշխատանքի արդյունավետ օգտագործման համար:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):